

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ**

**3106 <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ>>  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՐԱԿՏՈՐԻՍՏ -  
ՄԵՔԵՆԱՎԱՐ>> ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ԵՐԵՎԱՆ 2012**

ՏՆՕՐԵՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

<< ՏՐԱԿՏՈՐԻԱՍ-ՄԵՔԵՆԱԿԱՐ >> ՈՐԱԿԱԿՈՐՄԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԼԱՆԱՍՄԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ Նախնական մասնագիտական (արհեստագործական)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱԿՈՐՈՒՄԸ՝ ՏՐԱԿՏՈՐԻԱՍ - ՄԵՔԵՆԱԿԱՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր ուսուցումն ստացող

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԵԿԸ՝ արկա

(ազգանուն, անուն)

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ 3106 <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ>>

«\_\_» \_\_\_\_\_ 20\_\_թ

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Table with 3 main sections: I. Կուրս, II. Ժամանակի բյուջեն, and III. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/. Rows include subjects like 'Մաթեմատիկա', 'Ֆիզիկա', etc., with columns for hours and credits.

Legend boxes for symbols: Stական ուսուցում, 0 (Null), diamond, X, double colon, triangle, III, equals sign.

Տեսական ուսուցում, Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ, Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, Նախաավարտական արտադրական պրակտիկա, Մոդուլների ամփոփում, Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման, Ամփոփիչ պետական ատեստավորում, Արձակուրդ

## II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների									
		Քննութ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս					
					Ընդամենը	Այդ թվում		3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս.	6-րդ կիս.	7-րդ կիս.	8-րդ կիս.				
						Տեսակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ.	Սեմինար պարապմունք	2աբ.	2աբ.	16 2աբ.	18 2աբ.	2աբ.	2աբ.			
<b>1.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ , ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>																
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5 6(տ)		72	12	60			30	42						
1.2	Էկոլոգիայի և լայնդաֆթագիտության հիմունքներ		5(տ)		36	18	18			18							
1.3	Պատմություն		5(տ)		36	18	18			36							
1.4	Իրավունքի հիմունքներ		6(տ)		36	18	18				36						
1.5	Օտար լեզու		5, 6(տ)		60		60			26	34						
1.6	Ֆիզիկական կուլտուրա		5, 6(տ)		68		68			34	34						
1.7	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		5(տ)		18	9	9			18							
1.8	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5(տ)		18	9	9			18							
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>344</b>	<b>84</b>	<b>260</b>			<b>198</b>	<b>146</b>						
<b>2.</b>	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>																
2.1	Հաղորդակցություն		6(տ)		36	8	28				36						
2.2	Աշխատանքային գործունեության հմտություններ		6(տ)		36	12	24				36						
2.3	Համակարգչային օպերատորություն		6(տ)		54	12	42				54						
2.4	Անվտանգություն և առաջին օգնություն		5(տ)		36	20	16			36							
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>162</b>	<b>52</b>	<b>110</b>			<b>36</b>	<b>126</b>						
<b>3.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>																
3.1	Ճարտարագիտական գրաֆիկա, չափագիտության հիմունքներ		5(տ)		36	18	18			36							
3.2	Նյութագիտության հիմունքներ, փականագործական աշխատանքներ		5(տ)		48	14	34			30	18						
3.3	Էլեկտրատեխնիկայի հիմունքներ		5(տ)		36	18	18			20	16						
3.4	Ճանապարհային երթևեկության կանոններ		5(տ)		48	24	24			48							
3.5	Տրակտորներ և շարժիչներ		5(տ)		72	36	36			32	40						
3.6	Տրակտորի շասի, կառավարման համակարգեր		5(տ)		54	36	18			30	24						

3.7	Տրակտորի աշխատանքային սարքավորումներ		5(տ)		36	12	24				18	18		
3.8	Տրակտորի էլեկտրասարքավորումներ		5(տ)		18	6	12				18			
3.9	Տրակտորի գործնական վարում		5(տ)		36	8	28				16	20		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>384</b>	<b>172</b>	<b>212</b>				<b>248</b>	<b>136</b>		
<b>4.</b>	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>													
4.1	Երկրագործության և հողագիտության հիմունքներ		6(տ)		36	18	18					36		
4.2	Գյուղատնտեսական մեքենաներ		5,6(տ)		72	36	36				40	32		
4.3	Գյուղատնտեսական աշխատանքների արտադրական գործընթացների կատարում		5,6(տ)		108	48	60				54	54		
4.4	Գյուղատնտեսական բեռների և արտադրանքի բեռնում-բեռնաթափում, տեղափոխում և պահեստավորում		6(տ)		18	10	8					18		
4.5	Գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման հիմունքներ		6(տ)		54	18	36					54		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>288</b>	<b>130</b>	<b>158</b>				<b>94</b>	<b>194</b>		
<b>5.</b>	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		6տ		<b>36</b>							<b>36</b>		
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>				<b>10</b>							<b>10</b>		
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				<b>100</b>									
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>1224</b>						<b>576</b>	<b>648</b>		
	Շաբաթվա ժամերի քանակը										<b>36</b>	<b>36</b>		

III. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	IV. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Վարվելակերպի հիմունքներ				<b>ԿԱԲԻՆԵՏՆԵՐ</b>
2	Ընտանեկան կյանքի հիմունքներ			1	գծագրության և չափագիտության,
				2	երթնեկության անվտանգության
				3	անհատական համակարգիչների
				4	հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	5	օտար լեզվի
1	Արտադրական	5	2	6	աշխատանքի անվտանգության
2	Ուսումնական	6	2	7	գյուղատնտեսական մեքենաների և մեքենատրակտորային ագրեգատների տեխնիկական սպասարկման

3	Արտադրական	6	2		<b>ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>
	ԸՆԴԱՄԵՆԸ		<b>6</b>	1	վառելիքա-քսանյութերի և տեխնիկական հեղուկների
				2	շարժիչների
<b>V. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>  Համալիր քննություն հատուկ մասնագիտական մոդուլներից /հուլիսի 6-12-ը շրջանում/					<b>ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ</b>
				1	փականագործական աշխատանքների
					<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>
				1	մարզադահլիճ
				2	մարզահրապարակ

### VI. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը քյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում տնօրենը:
- Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
- Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
- Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
- Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
- Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
- Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
- Ուսումնական պրակտիկական կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
- Նախաավարտական պրակտիկական անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
- Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	<b>ԱՀ-Հ-3-12-001</b>
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ տեսական պարապմունք՝ 8 ժամ գործնական պարապմունք՝ 28 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար,</li> <li>2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը,</li> <li>3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը,</li> <li>4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում,</li> <li>5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,</p> <p>բ. ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,</p> <p>գ. ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,</p> <p>դ. շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>ե. անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու

	պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
	ա.ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային

	<p>տեղեկատվությունը փոխանցելու համար,  դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,  ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,  զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,  է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ  գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստատարի,  բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,  գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,  դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,  ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,  զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը,  դ. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և</p>



	<p>դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5.</b>	<p>Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ,</p>

	հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Հ-3-12-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, դեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ տեսական պարապմունք՝ 12 ժամ գործնական պարապմունք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների. 2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ. 3. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի դեկավարի հետ. 4. դրսևորի քննադատական մտածողություն. 5. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները. բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները. գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV). դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները. բ. ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ. գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևերումներ. դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևերումներ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ հարցերի առնվազն 70 %-ին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	խմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա.ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը. բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները. գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում պատշաճ հարաբերություն դրսևորելու կարողություն:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	դրսևորի քննադատական մտածողություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը. բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ. գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա:

	Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5.</b>	կառավարի սթրեյթը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում սթրեյթի կանխարգելման և անխուսափելի սթրեյթին դիմակայելու մեթոդները. բ. ճիշտ է կազմում իր աշխատանքային պլանը (պայմանական աշխատանքային պլան). գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները. դ. բացահայտում և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում. ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը. զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները. է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեյթին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը, ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ՀՕ-3-12-001
<b>Մոդուլի նպատակը</b>	<i>Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:</i>
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ

<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ), 2. Տեքստերի տարրական ֆորմատավորում, 3. Փաստաթղթի պահպանում, 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում, 5. Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 6. Փաստաթղթի տպագրում, 7. Ինտերնետում աշխատելու իմացություն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ)
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը, բ. բացել նոր փաստաթուղթ, գ. ստեղծել նոր օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ, ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում, զ. փակել փաստաթուղթը, է. բացել առկա փաստաթուղթը, ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: <u>Գործնական կատարման</u> միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային նյութ, որը պետք է պարունակի մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ: Ուսանողը Microsoft Word ծրագրում բացելով նոր փաստաթուղթ պետք է մուտքագրի առաջադրված տեքստը, ամրագրելով համակարգչի հիշողության մեջ փակի փաստաթուղթը, բացել առկա փաստաթուղթը, ցույց տալ Zoom գործիքի հնարավորությունները
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում` 2 ժամ գործնական աշխատանք` 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Տեքստերի տարրական ֆորմատավորում

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,  բ. նշել բառերը և տեքստային հատվածները,  գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,  դ. կատարել տողերի հավասարեցում,  ե. փոխել միջտողային տարածությունները,  զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով,  է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,  ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,  թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,  ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,  ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,  ժբ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ,  ժգ. պատճենել տեքստը,  ժդ. տեղափոխել տեքստը,  ժե. տողադարձել տեքստը,  ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:  Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա մուտքագրել տեքստ հայերեն և օտար լեզվով, նշի որոշ բառերը և տեքստային հատվածներ, կատարի մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում, տողերի հավասարեցում, փոխի միջտողային տարածությունները, տեքստի գույնը Font Color գործիքով, գունային ֆոնը Highlight գործիքով, պարբերության խորությունները լուսանցքներից, չեղյալ հայտարարի կատարած գործողությունները, վերականգնի նախկին նյութը, պատճենի, տեղափոխի, համարակալի տեքստը և այլն:  Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը 80%-ով ճիշտ է իրականացնում բոլոր գործողությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում` 2 ժամ  գործնական աշխատանք` 6 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Փաստաթղթի պահպանում</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,  բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,</p>

	գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, ինչպես նաև պահպանի փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. պատրաստել աղյուսակ, բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները, զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ, է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ, ը. փոխել աղյուսակի գծերի գույնը, թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով աղյուսակային նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա պատրաստել աղյուսակ, աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, կատարի ուղղումներ ու լրացումներ, ավելացնի նոր տողեր և նոր սյուներ, ջնջի աղյուսակի տողերը և սյուները, փոխել սյունակի լայնությունը և բարձրությունը Մկնիկի օգնությամբ, փոխի աղյուսակի գծերի գույնը, գունավորի աղյուսակի տողը և սյունը:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Գրաֆիկական խմբագրում և նկարագարում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,

	<p>բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,</p> <p>գ. գծագրել կանոնավոր պատկերներ,</p> <p>դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով,</p> <p>ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,</p> <p>զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,</p> <p>է. գծագրել տեքստային բլոկներ,</p> <p>ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները,</p> <p>թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,</p> <p>ժ. սովորավորել գրաֆիկական օբյեկտները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել որևէ գրաֆիկական օբյեկտ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գծագրել կանոնավոր պատկերներ, ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով, խմբավորել գրաֆիկական օբյեկտները, հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, գծագրել տեքստային բլոկներ, գունավորել, երանգավորել սովորավորել գրաֆիկական օբյեկտները,
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Փաստաթղթի տպագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները, գ. տպագրել փաստաթուղթը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել որևէ պատրաստի նյութ: Պետք է կարողանա նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, տպագրել փաստաթուղթը:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք</b>	Ինտերնետում աշխատելու իմացություն



7	
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,  բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,  գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը,  դ. իմանալ History հրամանի նշանակությունը,  ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,  զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,  է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,  ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,  թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,  ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,  ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,  ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,  ժգ. Ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,  ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,  ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:  Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Internet Explorer ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել ինտերնետի մուտքով համակարգիչ: Ուսանողը պետք է կարողանա ցույց տալ History, Favorites, Stop, Refresh, Back և Forward հրամանների օգտագործման կարողությունները, որոնի, գտնի, պատճենի տարաբնույթ ինֆորմացիա ինտերնետային էջից, կարողանա էլեկտրոնային հասցե բացել, ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ  գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱՍՕ-3-12-001
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>36 ժամ  տեսական պարապմունք՝ 20 ժամ</p>

	գործնական պարապմունք՝ 16 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները,</li> <li>2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան,</li> <li>3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ,</li> <li>4. ցուցաբերի առաջին օգնություն:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>է. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չափանիշներին դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի,</li> <li>2. տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</li> <li>3. հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</li> <li>4. էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:</li> <li>5. կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</li> </ol> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում</p>

	հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում` 6 ժամ գործնական աշխատանք` 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները, (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում` 4 ժամ գործնական աշխատանք` 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն)

	աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ցուցաբերել առաջին օգնություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, բ. ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը, գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, գ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, դ. կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, ե. կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, զ. ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը

	Ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում` 6 ժամ գործնական աշխատանք` 4 ժամ

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ**

**3106 <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂԱՀՈՎՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՈՂՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ>>**

<b>Մոդուլի դասիչը</b>	<b>ԳԱՏՄ 3-12-001</b>
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել մասնագիտական աշխատանքային գծագրեր ու էսքիզներ կարդալու և հասկանալու, ինչպես նաև տիպային մեքենամասերի էսքիզներ ու աշխատանքային գծագրեր կատարելու, չափիչ գործիքներով աշխատելու, չափումների տեխնիկային տիրապետելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ Դասախոսություն 18 ժամ Գործնական պարապմունք 18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝ 1. Կատարել պարզագույն մեքենամասերի էսքիզներ և աշխատանքային գծագրեր 2. Կարդալ աշխատանքային գծագրերը և էսքիզները. 3. Կարդալ հանգույցների ու մեքենամասերի աշխատանքային գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը, 4. Ներկայացնել մեքենամասերի չափերի թույլտվածքների համակարգը, նստեցվածքները, 5. Օգտվել թույլտվածքների աղյուսակներից, 6. Տիրապետել չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կատարել պարզագույն մեքենամասերի էսքիզներ և աշխատանքային գծագրեր
<b>Կատարման չափանիշներ</b>	1) Ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները հարթության վրա՝ կորերի լծորդում, փոխուղղահայաց ուղիղների կառուցում, եռանկյունների կառուցում կոորդինատներով և այլն, 2) Ճիշտ է կատարում պարզագույն մեքենամասերի պրոեկտումը հարթությունների վրա և պատկերում դրանց երեք պրոեկցիաները, 3) Ճիշտ է տալիս կտրվածքներ և պատկերում է առաջադրված պարզագույն մեքենամասերի աշխատանքային գծագրերը և

	<p>Էսքիզները,</p> <p>4) Ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պարզագույն մեքենամասերի չափերը,</p> <p>5) Ճիշտ է կատարում պարզագույն մեքենամասի բնօրինակից համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողին կտրվեն երկու դետալների մոդելներ և կհանձնարարվի նրանցից մեկի համար կատարել աշխատանքային գծագիրը՝ կառուցելով այդ դետալի երեք պրոյեկցիաները համապատասխան կտրվածքներով, դետալի չափերի նշանակումով, ինչպես նաև դետալի տարածական գծագիրը, իսկ մյուսի համար կատարել էսքիզը: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով: Այդ աշխատանքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, գծագրական գործիքներ, գծագրության համար հարմարեցված սեղաններ և շարժական քանոններ, դետալների հավաքածուներ, համապատասխան գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կարողալ աշխատանքային գծագրերը և էսքիզները.
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) Ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված չափերի թույլտվածքները և մաքրության դասերի նշանակումները,</li> <li>2) Ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները,</li> <li>3) Ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի և էսքիզի վրա ներկայացված տեխնիկական պայմանները,</li> <li>4) Ճիշտ է մեկնաբանում աշխատանքային գծագրերի կամ էսքիզի վրա պատկերված երիթի, բազմաերիթի, ատամնաանիվի, տարբեր նշանակության առվակների, երեսակների և նմանատիպ այլ տարրերի նշանակումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողին կտրվի որևէ դետալի աշխատանքային գծագիրը և դրա վերաբերյալ թեսթային հարցաշարը, բաղկացած ոչ պակաս քան 15 հարցից: Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեսթային հարցաշարի ոչ պակաս քան 75% հարցերին:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, դետալների և աշխատանքային գծագրերի ու էսքիզների հավաքածուներ, համապատասխան գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կարողալ հանգույցների ու մեքենամասերի աշխատանքային գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը

<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) Ճիշտ է բացատրում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերում առանձին մեքենամասերի դիրքավորման նշանակումները,</li> <li>2) Ճիշտ է բացատրում հավաքական գծագրում պայմանական նշանակումները՝ երիթային, բազմաերիթային միացություններ, ատամնաանվային կառչում, առանցքակալային նստեցվածք, եռակցման միացություն և նմանատիպ այլ նշանակումներ,</li> <li>3) Ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքների պայմանական նշանները,</li> <li>4) Ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, և կարողանում գծագրերի փաթեթից օգտվելով՝ հավաքական գծագրից ընտրել համապատասխան մեքենամասի աշխատանքային գծագիրը,</li> <li>5) Ճիշտ է մեկնաբանում հավաքական գծագրի տեխնիկական պահանջները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Սովորողին կտրվի հավաքական գծագիր իր մասնագրերով և դրանց վերաբերյալ թեսթային հարցաշարը, բաղկացած ոչ պակաս քան 15 հարցից: Այնուհետև ուսանողին հանձնարարվում է կատարել հավաքական գծագրի դետալներից մեկի էսքիզը:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեսթային հարցաշարի ոչ պակաս քան 75% հարցերին և ճիշտ կատարել հանձնարարված դետալի էսքիզը:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, գծագրական գործիքներ, գծագրության համար հարմարեցված սեղաններ և շարժական քանոններ, հավաքական գծագրերի և դրանց մասնագրերի հավաքածուներ, համապատասխան գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 2 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ներկայացնել մեքենամասերի չափերի թույլտվածքների համակարգը, նստեցվածքները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) Ճիշտ է բացատրում մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները:</li> <li>2) Ճիշտ է բացատրում մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները:</li> <li>3) Ճիշտ է պարզաբանում մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը:</li> <li>4) Ճիշտ է մեկնաբանում մեքենամասի նոմինալ, սահմանային և իրական չափերը:</li> </ol>
	<p>Սովորողին կտրվի մեքենայի որևէ հանգույցի գծագիր և այդ հանգույցի մեքենամասերի միացությունների նկատմամբ ներկայացվող տեխնիկական և տեխնոլոգիական պահանջներ: Այնուհետև սովորողին հանձնարարվում է բացատրել</p>

<b>Գնահատման միջոցը</b>	մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները, մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները, մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը: Ուսանողը կատարում է տրված հանգույցի միացությունների չափագրում, նշելով մաքրության դասերը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել հավաքական գծագրերի և դրանց մասնագրերի հավաքածուներ, համապատասխան գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Օգտվել թույլտվածքների աղյուսակներից
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է սահմանում թույլտվածք և նստեցվածք հասկացությունները, չափերի շեղումները (վերին, նս երբին և իրական) և բացատրում ի՞նչ են բացակն ու ձգվածքը,</li> <li>2) ճիշտ է մեկնաբանում թույլտվածքների համակարգը և սահմանում վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները,</li> <li>3) ճիշտ է թվարկում թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները (կվալիտետները),</li> <li>4) ճիշտ է օգտվում թույլտվածքների աղյուսակներից,</li> <li>5) ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի ճիշտ է հաշվարկում լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողին հանձնարարվում է սահմանել թույլտվածք և նստեցվածք, չափերի շեղումներ, բացակ ու ձգվածք հասկացությունները, մեկնաբանել թույլտվածքների համակարգը և բացատրել վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները, թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները: Սովորողին կտրվի մեքենայի որևէ հանգույցի գծագիր ու որոշակի տեխնիկական պահանջներ և կպահանջվի հաշվարկել լիսեռի և անցքի թույլտվածքները և հնարավոր նվազագույն բացակը:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար Այդ պարապմունքների համար անհրաժեշտ է օգտագործել թույլտվածքների աղյուսակներ, տեխնիկական պահանջներ ներկայացնող փաստաթղթեր, հանգույցի հավաքական գծագիր, հաշվիչ տեխնիկա, համապատասխան գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Տիրապետել չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով
	1) ճիշտ է բացատրում, թե ի՞նչ է նշանակում չափում և սահմանում օգտագործվող ժամանակակալից չափման միավորները,



<b>Կատարման չափանիշներ</b>	<p>2) ճիշտ է մեկնաբանում գոյություն ունեցող չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները,  3) ճիշտ է բացատրում ձողակարկինի կառուցվածքը և դրանով իրականացնում է հանձնարարված չափումները,  4) ճիշտ է օգտվում միկրոմետրից և չափաձողից ու մեկնաբանում վերջիններիս չափելու ճշտությունը,  5)ճիշտ է օգտվում ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Սովորողի գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն մեծությունների չափման, միավորների, չափման մեթոդների և դրանց իրականացման եղանակների, չափիչ գործիքների կառուցվածքի, չափելու ճշտության վերաբերյալ առաջադրանքներ: Սովորողին կտրվեն տարբեր տեսակի մեքենամասեր և կպահանջվի ձողակարկինի, միկրոմետրի, չափաձողի, ունիվերսալ անկյունաչափի, կալիբրների, բացակաչափի, շաբլոնների և պարուրակաչափերի ճգնությամբ չափել տրված մեքենամասերի հանձնարարվող մեծությունները, գնահատել չափման ճշտությունները: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար անհրաժեշտ է օգտագործել տարբեր կառուցվածքի մեքենամասեր, չափիչ գործիքներ, դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ, համապատասխան գրականություն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 2 ժամ  Գործնական աշխատանք 4 ժամ</p>
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՍՄ 3-12-002
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել սև և գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների, պոլիմերային և կերամիկական նյութերի տեսակների, հատկությունների, կիրառության բնագավառների վերաբերյալ, դրանց մակնշավորման սկզբունքները գործնականում օգտագործելու, ինչպես նաև մետաղների մշակման անհարժեշտ գործնական կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>48 ժամ  Տեսական պարապմունք 14 ժամ  Գործնական աշխատանք 34 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:</p>
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	<p>Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Բացատրել թուջերի և պողպատների դասակարգումը, դրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները,</li> <li>2. Բացատրել թուջերի և պողպատների մակնիշավորումը,</li> </ol>

	<p>3. Բացատրել տրակտորաշինության մեջ կիրառվող գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների, պոլիմերային և կերամիկական նյութերի դասակարգումը, կիրառման բնագավառները, հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները, մակնշավորումը,</p> <p>4. Կատարել մետաղի հատումը, հարթումը և ծռումը, կտրումը, խարտոցումը,</p> <p>5. Կատարել գայլիկոնում, եզրալայնում, անցքակոկում, պարուրակում, գամում,</p> <p>6. Կատարել ներխարտոցում հարմարակցում, քերանում, կիպահղկում:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բացատրել թուջերի և պողպատների դասակարգումը, դրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1)Ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի, որպես երկաթ ածխածնային միացության, կառուցվածքային էությունը և բացատրում դրանց դասակարգումը,</p> <p>2)Ճիշտ է մեկնաբանում պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն,</p> <p>3) Ճիշտ է մեկնաբանում պողպատների և թուջերի կիրառման բնագավառը ելնելով նրանց հիմնական ֆիզիկամեխանիկական հատկություններից,</p> <p>4) կարողանում է մետաղների նմուշների կոտրվածքներով ճիշտ ճանաչել և տարբերել թուջերը, և պողպատները,</p> <p>5)կարողանում է ձեռքի փականագործական գործիքներով՝ խարտոց, սրոցաքար, հղկաքար, ճիշտ գնահատել պողպատի և թուջի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողին հանձնարարվում է սահմանել պողպատների և թուջերի, որպես երկաթ ածխածնային միացության, կառուցվածքային էությունը և դասակարգել դրանք, բացատրել պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն և ներկայացնել դրանց կիրառման բնագավառը: Սովորողին կտրվեն կոտրատված մետաղների տարբեր նմուշներ և կպահանջվի ճանաչել և տարբերել թուջերը, և պողպատները, ձեռքի փականագործական գործիքներով գնահատել պողպատի և թուջի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար անհրաժեշտ է օգտագործել կոտրատված մետաղների տարբեր նմուշներ, ձեռքի փականագործական գործիքներ, չափիչ գործիքներ, դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ, համապատասխան գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության</b>	Բացատրել թուջերի և պողպատների մակնիշավորումը

<b>արդյունք 2</b>	
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) Ճիշտ է ներկայացնում պողպատների մակնիշավորումը,  2) Ճիշտ է ներկայացնում թուջերի մակնշավորումը,  3) կարողանում է ճիշտ վերծանել պողպատների և թուջերի մակնիշները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Սովորողի գիտելիքները ստուգելու նպատակով կպահանջվի ներկայացնել պողպատների և թուջերի մակնիշավորուման մեթոդիկան, կտրվի մետաղի կտորների նմուշներ ու կպահանջվի վերծանել դրանց մակնիշները: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ պողպատների և թուջերի մակնիշավորուման, մակնիշների վերծանման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, մետաղների նմուշներ, փականագործական գործիքներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 4 ժամ  Գործնական աշխատանք 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Բացատրել տրակտորաշինության մեջ կիրառվող գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների, պոլիմերային և կերամիկական նյութերի դասակարգումը, կիրառման բնագավառները, հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները, մակնշավորումը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) Ճիշտ է ներկայացնում տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ կիրառվող գունավոր մետաղների՝ ալյումինի և պղնձի համաձուլվածքները,  2) Ճիշտ է ներկայացնում ալյումինի և պղնձի համաձուլվածքների դասակարգումը, դրանց մակնշավորումը,  3) Ճիշտ է ներկայացնում ալյումինի և պղնձի համաձուլվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները:  4) Ճիշտ է ներկայացնում տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող պոլիմերային նյութերի դասակարգումը, մակնշավորումը, ֆիզիկա-քիմիական և մեխանիկական հատկությունները,  5) Ճիշտ է ներկայացնում տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող կերամիկական նյութերի դասակարգումը, մակնշավորումը, ֆիզիկա-քիմիական և մեխանիկական հատկությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է շարադրել տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ կիրառվող գունավոր մետաղների՝ ալյումինի և պղնձի համաձուլվածքները, պոլիմերային և կերամիկական նյութերը, դասակարգել դրանք, մակնշավորել, ներկայացնել դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեսթային հարցաշարի ոչ պակաս քան 75% հարցերին:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ տրակտորաշինության մեջ օգտագործվող ալյումինի և պղնձի համաձուլվածքների, պոլիմերային և կերամիկական նյութերի, դրանց դասակարգման, ֆիզիկամեխանիկական հատկությունների և մակնշավորման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, ալյումինի և պղնձի</p>

	համաձուլվածքների, պոլիմերային և կերամիկական նյութերի նմուշներ, փականագործական գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Կատարել մետաղի հատումը, հարթումը և ծռումը, կտրումը, խարտոցումը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է կատարում մետաղի հարթում, 2) ճիշտ է կատարում մետաղի ծռում, 3) ճիշտ է կատարում մետաղի կտրում, 4) ճիշտ է կատարում մետաղի խարտոցում:
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղի նմուշներ և պահանջվում է կատարել մետաղի հարթում, ծռում, կտրում, խարտոցում: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել գայլիկոնում, եզրալայնում, անցքակոկում, պարուրակում, գամում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է կատարում գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, 2) ճիշտ է կատարում ձեռքով գայլիկոնում, 3) ճիշտ է կատարում եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում: 4) ճիշտ է կատարում ներքին և արտաքին պարուրակների մշակում, 5) ճիշտ է կատարում գամում:
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և պահանջվում է կատարել գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, ձեռքով գայլիկոնում, եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Կատարել ներխարտոցում և հարմարակցում, քերանում, կիպահղկում

<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է կատարում անցքերի ներխարտոցում, 2) ճիշտ է կատարում մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում, 3) ճիշտ է կատարում շինվածքի մակերևույթների քերանում, 4) ճիշտ է կատարում կիպահղկման աշխատանքներ:
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և պահանջվում է կատարել անցքերի ներխարտոցում, մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում, շինվածքի մակերևույթների քերանում, կիպահղկման աշխատանքներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Գործնական աշխատանք 6 ժամ
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ -3-12-003
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ Էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունների, հաստատուն և փոփոխական հոսանքների էլեկտրական շղթաների, դրանցում ընթացող էլեկտրամագնիսական երևույթների մասին, ինչպես նաև ձևավորել էլեկտրական և մագնիսական շղթաներ հաշվարկելու և հավաքելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ Տեսական պարապմունք 18 ժամ Գործնական աշխատանք 18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱԱՕ 3-11-001 << Անվտանգություն և առաջին օգնություն >> մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝ 1. Բացատրել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը 2. ներկայացնել հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթայի պարամետրերը, հավաքել շղթա: 3. Ներկայացնել փոփոխական հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, հաշվարկել շղթայի պարամետրերը, հավաքել շղթա:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության</b>	Բացատրել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը

<b>արդյունք 1</b>	
<b>Կատարման չափանիշներ</b>	1)Ճիշտ է բացատրում էլեկտրական դաշտի առաջացումը, 2)Ճիշտ է բացատրում մագնիսական դաշտի առաջացումը, 3)Ճիշտ է ներկայացնում էլեկտրական և մագնիսական դաշտերի բնութագրերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է բացատրել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը, ներկայացնել դրանց բնութագրերը: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեստային հարցաշարի ոչ պակաս քան 75% հարցերին:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացման և դրանց բնութագրերի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղալար, դիմադրություններ, էլեկտրալամպեր, էլեկտրաչափիչ սարքավորումներ, գործիքներ, դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն,:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթայի պարամետրերը, հավաքել շղթա:
<b>Կատարման չափանիշներ</b>	1) Ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի գծային էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, 2) Ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի գծային էլեկտրական շղթայի աշխատանքային ռեժիմները, 3) Ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի առաջադրված գծային էլեկտրական շղթայի պարամետրերը, 4) Ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի ոչ գծային էլեկտրական շղթայի առանձնահատկությունները, 5) Ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի առաջադրված ոչ գծային էլեկտրական շղթայի պարամետրերը: 6) Ճիշտ է հավաքում հաստատուն հոսանքի շղթան:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել հաստատուն հոսանքի գծային և ոչ գծային էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, աշխատանքային ռեժիմները, հաշվել պարամետրերը և հավաքել հաստատուն հոսանքի շղթա: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հաստատուն հոսանքի գծային և ոչ գծային էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունների, աշխատանքային ռեժիմների վերաբերյալ, այնպես որ, սովորողը կարողանա հաշվել էլեկտրական շղթայի պարամետրերը և հավաքել հաստատուն հոսանքի շղթա: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղալար, դիմադրություններ, էլեկտրալամպեր, էլեկտրաչափիչ սարքավորումներ, գործիքներ, դիտակտիվ նյութեր:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել փոփոխական հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, հաշվարկել շղթայի պարամետրերը, հավաքել շղթա:
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի շղթայի տարրերն ու պարամետրերը, 2) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները, 3) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների աշխատանքային ռեժիմները, 4) ճիշտ է հաշվում փոփոխական հոսանքի առաջադրված միաֆազ և եռաֆազ շղթաների պարամետրերը, 5) ճիշտ է ներկայացնում ռեզոնանսային երևույթները փոփոխական հոսանքի շղթայում: 6) ճիշտ է հավաքում փոփոխական հոսանքի շղթան:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները, շղթայի տարրերն ու պարամետրերը, աշխատանքային ռեժիմները, հաշվել փոփոխական հոսանքի առաջադրված միաֆազ և եռաֆազ շղթաների պարամետրերը, ներկայացնել ռեզոնանսային երևույթները և հավաքել փոփոխական հոսանքի շղթա: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացություններին, շղթայի տարրերի ու պարամետրերի, աշխատանքային ռեժիմների ռեզոնանսային երևույթների վերաբերյալ, կարողանա հաշվել փոփոխական հոսանքի առաջադրված միաֆազ և եռաֆազ շղթաների պարամետրերը և հավաքել փոփոխական հոսանքի շղթա: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղալար, դիմադրություններ, էլեկտրալամպեր, էլեկտրաչափիչ սարքավորումներ, գործիքներ, դիտակտիվ նյութեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԵՐ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ 3 – 12 – 004
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել, համաձայն երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի, ՀՀ-ում գործող ճանապարհային երթևեկության կանոնների գործնական կիրառման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	48 ժամ Տեսական պարապմունք 24 ժամ Գործնական աշխատանք 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության</b>	Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝

<b>արդյունքներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. բացատրել Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները,</li> <li>2. բացատրել Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները,</li> <li>3. Բացատրել ճանապարհային նշանները,</li> <li>4. Բացատրել ճանապարհային գծանշանները,</li> <li>5. Բացատրել տրանսպորտային միջոցի ճանաչման նշանները,</li> <li>6. Բացատրել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Բացատրել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) Ճիշտ է ներկայացնում գործող օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները,</li> <li>2) Ճիշտ է ներկայացնում ճանապարհային երթևեկության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները,</li> <li>3) Ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ, վարորդի, հետիոտների և ուղևորների հիմնական պարտականություններն ու իրավունքները,</li> <li>4) Ճիշտ է ներկայացնում տարբեր տրանսպորտային միջոցների դասակարգումը և դրանք վարելու իրավունքը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել գործող օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, ճանապարհային երթևեկության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ, վարորդի, հետիոտների և ուղևորների հիմնական պարտականություններն ու իրավունքները, տարբեր տրանսպորտային միջոցների դասակարգումը և դրանք վարելու իրավունքը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողն անսղալ պատասխանում է բոլոր հարցերին: Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, օրենսդրական փաստաթղթեր, ճանապարհների և փոխախտումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բացատրել Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները
	<ol style="list-style-type: none"> <li>1) Ճիշտ է ներկայացնում ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթները,</li> <li>2) Ճիշտ է ներկայացնում ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված լուսացույցի և կարգավորողի</li> </ol>



<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ազդանշանները,</p> <p>3) Ճիշտ է ներկայացնում վթարային ազդանշանի և &lt;&lt;Վթարային կանգառ&gt;&gt; ճանաչման նշանի կիրառումը</p> <p>4) Ճիշտ է ներկայացնում հատուկ ազդանշանների կիրառումը,</p> <p>5) Ճիշտ է ներկայացնում երթևեկության սկիզբը և մանևրումը, տրանսպորտային միջոցների դասավորումը երթևեկելի մասում, վազանցը, երթևեկության արագությունը, կանգառը և կայանումը, հետիոտնային անցումների հատումը, երթևեկությունը երկաթուղային գծանցներով, երթևեկությունը ավտոմայրուղիներով, երթևեկությունը բնակելի գոտիներում,</p> <p>6) Ճիշտ է ներկայացնում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների առավելությունը և դրանց կանգառ կետերի անցումը, արտաքին լուսային սարքերի և ձայնային ազդանշանների կիրառումը, մեխանիկական տրանսպորտային միջոցների քարշակումը, մարդկանց և բեռների փոխադրումները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել և կիրառել՝</p> <p>ա. ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթները,</p> <p>բ. լուսացույցի և կարգավորողի ազդանշանները,</p> <p>գ. վթարային ազդանշանի և &lt;&lt;Վթարային կանգառ&gt;&gt; ճանաչման նշանի կիրառումը,</p> <p>դ. հատուկ ազդանշանների կիրառումը,</p> <p>ե. երթևեկության սկիզբը և մանևրումը,</p> <p>զ. տրանսպորտային միջոցների դասավորումը երթևեկելի մասում,</p> <p>է. վազանցը և երթևեկության արագությունը,</p> <p>ը. կանգառը և կայանումը,</p> <p>թ. հետիոտնային անցումների հատումը,</p> <p>ժ. երթևեկությունը երկաթուղային գծանցներով,</p> <p>ի. երթևեկությունը ավտոմայրուղիներով,</p> <p>լ. երթևեկությունը բնակելի գոտիներում:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ կիրառել երթևեկության կազմակերպման անհրաժեշտ սխեման:</p> <p>Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Բացատրել ճանապարհային նշանները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) Ճիշտ է ներկայացնում ճանապարհային նախագուշացնող նշանները,</p> <p>2) Ճիշտ է ներկայացնում առավելության նշանները,</p>

	<p>3) Ճիշտ է ներկայացնում արգելող նշանները,</p> <p>4) Ճիշտ է ներկայացնում թելադրող և հատուկ թելադրանքի նշանները,</p> <p>5) Ճիշտ է ներկայացնում տեղեկատվության սպասարկման և լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ) նշանները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել և օգտվել՝</p> <p>ա. ճանապարհային նախագգուշացնող նշաններից,</p> <p>բ. առավելության նշաններից,</p> <p>գ. արգելող նշաններից,</p> <p>դ. թելադրող և հատուկ թելադրանքի նշաններից,</p> <p>ե. տեղեկատվության սպասարկման և լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ) նշաններից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ կիրառել երթևեկության կազմակերպման անհրաժեշտ սխեման:</p> <p>Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ ճանապարհային նշանների վերաբերյալ և կարողություններ օգտվելու այդ նշաններից:</p> <p>Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 4 ժամ</p> <p>Գործնական աշխատանք 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Բացատրել ճանապարհային գծանշանները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) Ճիշտ է ներկայացնում ճանապարհային հորիզոնական գծանշումները և բացատրում դրանց կիրառումը,</p> <p>2) Ճիշտ է ներկայացնում ճանապարհային ուղղաձիգ գծանշումները և բացատրում դրանց կիրառումը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել հորիզոնական և ուղղաձիգ գծանշումները և օգտվում դրանցից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ օգտվել հորիզոնական և ուղղաձիգ գծանշումներից:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ ներկայացնել հորիզոնական և ուղղաձիգ գծանշումների վերաբերյալ և օգտվում դրանցից:</p> <p>Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ, տրանսպորտային միջոց:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 4 ժամ</p> <p>Գործնական աշխատանք 2 ժամ</p>
<b>Ուսումնառության</b>	<p>Բացատրել տրանսպորտային միջոցի ճանաչման նշանները</p>

<b>արդյունք 5</b>	
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) Ճիշտ է ներկայացնում Ավտոգնացք, Երկարաչափ Տրանսպորտային միջոց, ճանաչման նշանները և նրանց ներկայացվող պահանջները,</p> <p>2) Ճիշտ է ներկայացնում Արագության սահմանափակում, Դանդաղընթաց տրանսպորտային միջոց, Մեծ եզրաչափերով բեռ, Վտանգավոր բեռ, նշանները և դրանց ներկայացվող պահանջները,</p> <p>3) Ճիշտ է ներկայացնում երեխաների փոխադրում, Խուլ վարորդ, ՌԻսումնական տրանսպորտային միջոց, բժիշկ, հաշմանդամ նշանները և դրանց ներկայացվող պահանջները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել</p> <p>ա. Ավտոգնացք, բ. Երկարաչափ Տրանսպորտային միջոց, գ. Արագության սահմանափակում, դ. Դանդաղընթաց տրանսպորտային միջոց, ե. Մեծ եզրաչափերով բեռ, զ. Վտանգավոր բեռ, է. երեխաների փոխադրում, ը. Խուլ վարորդ, թ. ՌԻսումնական տրանսպորտային միջոց, ժ. բժիշկ, ի. հաշմանդամ նշանները և դրանց ներկայացվող պահանջները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ օգտվել տրանսպորտային միջոցի ճանաչման նշաններից:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ տրանսպորտային միջոցի ճանաչման նշանների վերաբերյալ:</p> <p>Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհային նշանների լուսանկարներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 4 ժամ</p>
<b>ՌԻսումնառության արդյունք 6</b>	<p>Բացատրել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1)Ճիշտ է ներկայացնում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները, 2) Ճիշտ է ներկայացնում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարչական տուգանքաչափերը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով կստուգվեն սովորողների գիտելիքները՝ կապված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածների հետ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է հստակ ներկայացնել իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական</p>

	հողվածները և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարչական տուգանքաչափերը:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հողվածների և օրենսգրքով սահմանված վարչական տուգանքաչափերի մասին:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ՏՐԱԿՏՈՐՆԵՐ ԵՎ ՇԱՐԺԻՉՆԵՐ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՍՄ 3 – 12 – 005
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տրակտորները, ինքնագնած շասիները և կցանքները ըստ դրանց դասակարգման տարբերակելու, տրակտորի, ինքնագնած շասսիի և կցանքի հիմնական կառուցվածքային մասերը, ինչպես նաև շարժիչի հիմնական մասերի, մեխանիզմների և համակարգերի կառուցվածքները և աշխատանքը իմանալու ունակություններ, դրանց տեխնիկական սպասարկումը կատարելու ու շարժիչի հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով որոշելու հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ Տեսական պարապմունք 36 ժամ Գործնական աշխատանք 36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	<p>Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ներկայացնել տրակտորների և ինքնագնած շասսիների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը,</li> <li>2. Ներկայացնել դիզելային շարժիչների մեխանիզմների կառուցվածքը, առանձին մասերի նշանակությունը, արտաքին արտահայտումներով որոշել հնարավոր անսարքությունները, կարգավորել ջերմային բացակը,</li> <li>3. Ներկայացնել դիզելային շարժիչների հովացման եղանակները, համակարգի ընդհանուր կառուցվածքը, առանձին մասերի նշանակությունը, հնարավոր անսարքությունները և դրանց վերացման եղանակները, կատարել համակարգի տեխնիկական սպասարկում,</li> <li>4. Ներկայացնել դիզելային շարժիչի յուղման եղանակները, օգտագործվող յուղերը, համակարգի ընդհանուր կառուցվածքը, առանձին մասերի նշանակությունը, հնարավոր անսարքությունները և դրանց վերացման եղանակները, կատարել համակարգի տեխնիկական սպասարկում,</li> <li>5. Ներկայացնել դիզելի սնման համակարգի ընդհանուր կառուցվածքը, օգտագործվող վառելիքը, առանձին մասերի (օդի գոտիներ, վառելիքի բաք, գոտիներ, ներմղող պոմպ, բոցամուղ, բարձր ճնշման վառելիքի պոմպ, համառեժիմ կարգավորիչ) նշանակությունը, հնարավոր անսարքությունները և դրանց վերացման եղանակները, կատարել համակարգի տեխնիկական սպասարկում,</li> <li>6. Ներկայացնել դիզելային շարժիչի գործարկման եղանակները, գործարկման շարժիչի աշխատանքի ցիկը, օգտագործվող վառելիքը, գործարկման շարժիչի (միագլան երկտակտ կարբյուրատորային շարժիչի) և ռեդուկտորի ընդհանուր կառուցվածքը՝ հնարավոր անսարքությունները և դրանց վերացման եղանակները, կատարել համակարգի տեխնիկական սպասարկում, գործարկել դիզելային շարժիչը:</li> </ol>

<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տրակտորների և ինքնագնած շասիների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում տրակտորների, ինքնագնած շասիների և կցանքների դասակարգման սկզբունքները, 2) ճիշտ է տարբերակում տարբեր մակնիշների տրակտորները, ինքնագնաց շասիները և կցանքները, 3) ճիշտ է ներկայացնում տրակտորների, ինքնագնած շասիների և կցանքների ընդհանուր կառուցվածքը, հիմնական կառուցվածքային մասերի նշանակությունը, 4) ճիշտ է ներկայացնում տրակտորի դիզելային շարժիչների ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշները:
<b>Գնահատման միջոցը</b>	Սովորողի գիտելիքների ստուգման նպատակով կտրվեն տրակտորների, ինքնագնաց շասիների և կցանքների դասակարգման սկզբունքների, տարբեր մակնիշների տրակտորների, ինքնագնաց շասիների և կցանքների տարբերակման, դրանց կցանքների ընդհանուր կառուցվածքի, հիմնական կառուցվածքային մասերի նշանակության, տրակտորի դիզելային շարժիչների ընդհանուր կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի, աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ առաջադրանքներ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ տրակտորների, ինքնագնաց շասիների և կցանքների դասակարգման սկզբունքների, տարբեր մակնիշների տրակտորների, ինքնագնաց շասիների և կցանքների տարբերակման, դրանց կցանքների ընդհանուր կառուցվածքի, հիմնական կառուցվածքային մասերի նշանակության, տրակտորի դիզելային շարժիչների ընդհանուր կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի, աշխատանքը բնութագրող հիմնական ցուցանիշների վերաբերյալ: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, տրակտորների առանձին հանգույցների մոդելներ և իրական տրակտոր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել դիզելային շարժիչների մեխանիզմների կառուցվածքը, առանձին մասերի նշանակությունը, արտաքին արտահայտումներով որոշել հնարավոր անսարքությունները, կարգավորել ջերմային բացակը:
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում շուռտվիկշարժաթևային մեխանիզմի կառուցվածքը, 2) ճիշտ է ներկայացնում գլանամխոցային խմբի առանձին մասերը (գլան, մխոց, մխոցաօդեր, մխոցամատ), 3) ճիշտ է ներկայացնում շուռտվիկշարժաթևային խմբի առանձին մասերը (շարժաթև, ծնկաձև լիսեռ, թափանիվ), 4) ճիշտ է որոշում հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով և ներկայացնում վերացման եղանակները, 5) ճիշտ է կարգավորում ջերմային բացակը:

<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Տրակտորի վարումը հետընթացքով, անցումը դարբասով, մանրումը սահմանափակ անցատեղերով
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է տեղից շարժում տրակտորը հետընթացքով՝ մինչև ընթացքի սահունությունը, մոտեցնում հետընթացքով կախովի կամ կցովի մեքենային, 2) անցնում է պայմանական դարբասով առաջընթացքով և հետընթացքով, 3) վարում է տրակտորը տարբեր գյուղատնտեսական մեքենաների հետ ագրեգատավորված:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից կպահանջվի՝ ա. տեղից շարժել տրակտորը հետընթացքով՝ մինչև ընթացքի սահունությունը, բ. մոտեցնել հետընթացքով կախովի կամ կցովի մեքենային, գ. կազմել ագրեգատ, դ. վարել տրակտորը պայմանական դարբասով առաջընթացքով և հետընթացքով, ե. վարել տրակտորը տարբեր գյուղատնտեսական մեքենաների հետ ագրեգատավորված, Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե սովորողը լիարժեք կատարի տրված առաջադրանքները:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ կարողություններ վարել տրակտորը հետընթացքով, անցումը դարբասով, մանրումը սահմանափակ անցատեղերով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, մեթոդական ցուցումներ, տրակտոր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Տրակտորի վարումը երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ձեռք է բերել աչքերի շարժման ունակություն , 2) ճիշտ է տրակտորով դուրս գալիս երթևեկության գոտի, 3) ճիշտ է անցնում երկաթուղային զծանցի հատումը,

	<p>4) ճիշտ է շարժվում տրանսպորտային հոսքում,</p> <p>5) ճիշտ է անցնում տարբեր խաչմերուկներ,</p> <p>6) ճիշտ է որոշում մոտեցող տրանսպորտային միջոցի արագությունը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից կպահանջվի՝</p> <p>զարգացնել աչքերի շարժման ունակությունը,</p> <p>տրակտորով դուրս գալ երթևեկության գոտի,</p> <p>անցնել երկաթուղային գծանցի հատումը,</p> <p>շարժվել տրանսպորտային հոսքում,</p> <p>Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե սովորողը լիարժեք կատարի տրված առաջադրանքները:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ կարողություններ վարել տրակտորը երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով:</p> <p>Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ, տրակտոր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Գործնական աշխատանք 6 ժամ
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՍՄ 3 – 12 – 010
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հողի կազմի և հատկությունների, հողի մշակման համակարգերի, պարարտանյութերի տեսակների, ցանքաշրջանառությունների, երկրագործության հիմնական համակարգերի մասին և ձևավորել գյուղատնտեսական մշակաբույսերը ճանաչելու, հող ի մեխանիկական կազմը գնահատելու, ցանքսի և պարարտացման նորմերը գնահատելու կարողություններ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>36 ժամ</p> <p>Տեսական պարապմունք 18 ժամ</p> <p>Գործնական աշխատանք 18 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. կարողանալ շարադրել հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և մեխանիկական կազմը,</li> <li>2. կարողանալ շարադրել գյուղատնտեսական մշակաբույսերի աճի պայմանները և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները,</li> <li>3. կարողանալ դասակարգել մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	կարողանալ շարադրել հողի ֆիզիկաքիմիական հատկությունները և մեխանիկական կազմը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) Կարողանում է գնահատել հողի կազմը,</li> <li>2) Ճիշտ է շարադրում հողի հատկությունները:</li> </ol>

<b>Գնահատման միջոցը</b>	Ուսանողին կտրվի ստուգողական առաջադրանք, բաղկացած ոչ պակաս քան 6 հարցից և գործնական աշխատանք: Ստուգողական առաջադրանքը կվերաբերվի հողի մեխանիկական կազմին և ֆիզիկաքիմիական հատկություններին: Գործնական աշխատանքի ժամանակ սովորողին կտրվի հողանմուշ և կպահանջվի որոշել դրա մեխանիկական կազմը: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել ստուգողական առաջադրանքի բոլոր հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարել գործնական աշխատանքը:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ուսումնական համապատասխան գրականություն, տաբեր հողատեսակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և նքուշներ, չափիչ և ստուգիչ գործիքներ, համապատասխան սարքեր և պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնաստության արդյունք 2</b>	կարողանալ շարադրել գյուղատնտեսական մշակաբույսերի աճի պայմանները և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է նկարագրում գյուղատնտեսական մշակաբույսերի աճի պայմանները, 2) կարողանում է ճիշտ շարադրել երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդները:
<b>Գնահատման միջոցը</b>	Ուսանողին կտրվի ստուգողական առաջադրանք, բաղկացած ոչ պակաս քան 6 հարցից: Ստուգողական առաջադրանքը կվերաբերվի մշակաբույսերի կյանքի պայմաններին և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդներին: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել ստուգողական առաջադրանքի հարցերի ոչ պակաս քան 80 %-ին:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ուսումնական համապատասխան գրականություն գյուղատնտեսական մշակաբույսերի կյանքի պայմանների և երկրագործության մեջ դրանց կանոնավորման մեթոդների մասին, տաբեր գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ դիդակտիկ նյութեր և պարագաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնաստության արդյունք 3</b>	Կարողանալ դասակարգել մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է դասակարգում մոլախոտերը, 2) ճանաչում է մոլախոտերը արտաքին տեսքով, 3) ճիշտ է շարադրում մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումները:
<b>Գնահատման միջոցը</b>	Ուսանողին կտրվի ստուգողական առաջադրանք, բաղկացած ոչ պակաս քան 6 հարցից և գործնական աշխատանք: Ստուգողական առաջադրանքը կվերաբերվի մոլախոտերի դասակարգման, հաշվառման մեթոդներին և դրանց դեմ պայքարի միջոցառումներին: Գործնական աշխատանքի ժամանակ ուսանողին կառաջադրվի երեք տեսակի մոլախոտ և կպահանջվի տալ անվանումը, նկարագրել տարածվածությունը և դրանց դեմ պայքարի մեթոդները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել ստուգողական առաջադրանքի հարցերի ոչ պակաս

	քան 80 %-ին և ամբողջությամբ ճիշտ է կատարել գործնական աշխատանքը:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել տաբեր մոլախոտերի վերաբերյալ դիդակտիկ նյութեր, հերբեցիդներ, համապատասխան ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ 3 – 12 – 011
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գյուղատնտեսական մեքենաների ընդհանուր կառուցվածքի, ինչպես նաև դրանց առանձին հանգույցների, մեխանիզմների կառուցվածքների և աշխատանքի սկզբունքի վերաբերյալ գիտելիքներ, գյուղատնտեսական մեքենաների հիմնական կարգավորումներ կատարելու գործնական ունակություններ և հմտություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ Տեսական պարապմունք 36 ժամ Գործնական աշխատանք 36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնել հողամշակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը,</li> <li>2. ներկայացնել ցանիչ և տնկիչ մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը,</li> <li>3. ներկայացնել պարարտացման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը,</li> <li>4. ներկայացնել բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը,</li> <li>5. ներկայացնել բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հողամշակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հողի մեխանիկական մշակման եղանակները և հողամշակման մեքենաների դասակարգումը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում գութանի ընդհանուր կառուցվածքը, առանձին մասերի (իրան, խոփ, թև, դաշտային տախտակ, նախագութանիկ, հողխորացուցիչ, դանակ, անիվներ ) նշանակությունը և տեսակները:</li> <li>3) ճիշտ է ներկայացնում հողի մակերեսային մշակման մեքենաների նշանակությունը և կառուցվածքը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվի մի շարք առաջադրանքներ և կպահանջվի շարադրել հողի



	մեխանիկական մշակման եղանակները և դասակարգել հողամշակման մեքենաները, ներկայացնել առանձին մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը և որոշել կամ ընտրել մեքենաների տեխնիկական և շահագործական ցուցանիշները: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի, թեստերի կամ գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ մեքենաների կառուցվածքի, նրանց տեխնիկական և շահագործական ցուցանիշների ընտրման և հաշվարկման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ և ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել ցանիչ և տնկիչ մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում ցանիչ մեքենաների դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում համակցված շարքացանի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 3) ճիշտ է ներկայացնում շարքացանի առանձին հանգույցների նշանակությունը և կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում կարտոֆիլատնկիչ մեքենայի կառուցվածքը, 5) ճիշտ է ներկայացնում սածիլատնկիչ մեքենայի կառուցվածքը:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվի մի շարք առաջադրանքներ և կպահանջվի դասակարգել ցանիչ և տնկիչ մեքենաները, ներկայացնել շարքացանի, կարտոֆիլատնկիչ և սածիլատնկիչ մեքենաների ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, դրանց առանձին հանգույցների նշանակությունը և կառուցվածքը: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ ցանիչ և տնկիչ մեքենաների նշանակության և ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: : Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ և ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել պարարտացման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում պարարտացման մեքենաների դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում հանքային պարարտանյութերի ցրիչների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 3) ճիշտ է ներկայացնում օրգանական պարարտանյութերի ցրիչների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 4) ճիշտ է ներկայացնում հողի մեջ հեղուկ և պինդ պարարտանյութեր մատուցող մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:

<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվի մի շարք առաջադրանքներ և կպահանջվի դասակարգել պարարտացման մեքենաները, ներկայացնել հանքային և օրգանական պարարտանյութերի ցրիչների, հողի մեջ հեղուկ և պինդ պարարտանյութեր մատուցող մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ պարարտացման մեքենաների նշանակության և ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: : Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ և ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել բույսերի քիմիական պաշտպանության մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում տրակտորային սրակիչների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 2) ճիշտ է ներկայացնում փոշոտիչների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվի մի շարք առաջադրանքներ և կպահանջվի դասակարգել բույսերի քիմիական պաշտպանության մեքենաները, ներկայացնել տրակտորային սրակիչների և փոշոտիչների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ քիմիական պաշտպանության մեքենաների նշանակության և ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: : Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ և ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 6 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
	1) ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում հնձիչ մեքենաների առանձին հանգույցների նշանակությունը և կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում քարշանների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,

<b>Կատարման չափանիշներ</b>	4) ճիշտ է ներկայացնում հավաքիչ-բարդոցիչների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, 5) ճիշտ է ներկայացնում մամլիչ-հավաքիչների նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվի մի շարք առաջադրանքներ և կպահանջվի դասակարգել հնձիչ մեքենաները, ներկայացնել հնձիչ մեքենաների առանձին հանգույցների, քարշանների, հավաքիչ-բարդոցիչների և մամլիչ-հավաքիչների նշանակությունը և կառուցվածքը, Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հնձիչ մեքենաների դասակարգման, հնձիչ մեքենաների առանձին հանգույցների, քարշանների, հավաքիչ-բարդոցիչների և մամլիչ-հավաքիչների նշանակության և կառուցվածքի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր մեքենաների և գործիքների դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ և ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 6 ժամ
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ&gt;&gt;</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ 3 – 12 – 012
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) ռացիոնալ համալրման, ագրեգատի կազմի ճշտման վերաբերյալ գիտելիքներ և ՄՏԱ-ի արդյունավետ շահագործման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	108 ժամ Տեսական պարապմունք 48 ժամ Գործնական աշխատանք 60 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳԱՏՄ 3 – 12 – 10 <<Երկրագործության և հողագիտության հիմունքներ>> և ԳԱՏՄ 3 – 12 – 011 «Գյուղատնտեսական մեքենաներ>> մոդուլները
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա՝ 1. ներկայացնել մեքենաների համակարգը և դասակարգել բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացման ու ավտոմատացման միջոցները, 2. ներկայացնել հողի նախացանքային օպերացիաների տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը, 3. ներկայացնել հողի պարարտացման տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը, 4. ներկայացնել մշակաբույսերի քիմիական պաշտպանության տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը, 5. ներկայացնել մշակաբույսերի ցանքի և տնկման տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը,

	6. Ճիշտ շարադրել մեքենաների պահպանման եղանակները և գործընթացները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կարողանալ ներկայացնել մեքենաների համակարգը և դասակարգել բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացման ու ավտոմատացման միջոցները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) Ճիշտ է ներկայացնում մեր երկրի տարածքի գոտիականությունը և ՄՏԱ-ի օգտագործման առանձնահատկությունները կոնկրետ պայմաններում, 2) Ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական գործընթացների հիմնական խմբերը. հողի մշակում, ցանք, տնկում և պարարտացում, գյուղատնտեսական մշակաբույսերի խնամք, մշակաբույսերի բերքահավաք, 3) Ճիշտ է ներկայացնում օպերացիոն տեխնոլոգիական քարտերը:
<b>Գնահատման միջոցը</b>	Հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով կստուգվեն սովորողների գիտելիքները՝ կապված մեր երկրի տարածքի գոտիականության և կոնկրետ պայմաններում ՄՏԱ-ի օգտագործման առանձնահատկությունների, տեխնոլոգիական գործընթացների հիմնական խմբերի. հողի մշակման, ցանքի, տնկման և պարարտացման, գյուղատնտեսական մշակաբույսերի խնամքի, մշակաբույսերի բերքահավաքի հետ: Գործնական աշխատանքների ժամանակ կպահանջվի կազմել և մեկնաբանել օպերացիոն տեխնոլոգիական քարտերը: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեսթային առաջադրանքի ժամանակ առաջադրված հարցերին և ամբողջովին ճիշտ է կատարել գործնական աշխատանքի ժամանակ առաջադրված պահանջները:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ մեր երկրի տարածքի գոտիականության և կոնկրետ պայմաններում ՄՏԱ-ի օգտագործման առանձնահատկությունների, տեխնոլոգիական գործընթացների հիմնական խմբերի. հողի մշակման, ցանքի, տնկման և պարարտացման, գյուղատնտեսական մշակաբույսերի խնամքի, մշակաբույսերի բերքահավաքի վերաբերյալ: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել ուսումնական գրականություն, ստենդներ, պլակատներ, սարքավորումների հիմնական խմբերի մոդելներ և նմուշներ, տեսաֆիլմեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հողի նախացանքային օպերացիաների տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) Ճիշտ է ներկայացնում վարի նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, 2) Ճիշտ է ներկայացնում վարի ՄՏԱ-ի կազմը, 3) Ճիշտ է նախապատարաստում ՄՏԱ-ը աշխատանքի համար, 4) Ճիշտ է կատարում աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները, 5) Ճիշտ է ներկայացնում համատարած կուլտիվացիայի նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, 6) Ճիշտ է ներկայացնում ՄՏԱ-ի կազմը, 7) Ճիշտ է նախապատարաստում ՄՏԱ-ը աշխատանքի համար, 8) Ճիշտ է կատարում աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները:

<b>Գնահատման միջոցը</b>	<p>Հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով կստուգվեն սովորողների գիտելիքները: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ և կպահանջվի ներկայացնել վարի և համատարած կուլտիվացիայի նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, վարի և համատարած կուլտիվացիայի ՄՏԱ-ի կազմը: Կազմել ՄՏԱ, նախապատարաստել աշխատանքի համար, կատարել վար և համատարած կուլտիվացիա, պահպանելով անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի ժամանակ առաջադրված հարցերին և ամբողջովին ճիշտ է կատարել գործնական աշխատանքի ժամանակ առաջադրված պահանջները:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ վարի և համատարած կուլտիվացիայի նշանակության, ագրոտեխնիկական պահանջների, վարի և համատարած կուլտիվացիայի ՄՏԱ-ի կազմի վերաբերյալ, զարգացնել կարողություններ ՄՏԱ կազմելու և աշխատանքի նախապատարաստելու և տեխնոլոգիական գործընթացներ կատարելու համար: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն, դիտակտիվ նյութեր, տրակտորներ, հողի մշակման մեքենաներ, գործիքներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Ներկայացնել հողի պարարտացման տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում հողի պարարտացման նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում օրգանական պարարտանյութերի մատուցման ՄՏԱ-ի կազմը,</li> <li>3) ճիշտ է նախապատարաստում ՄՏԱ-ը աշխատանքի համար,</li> <li>4) ճիշտ է կատարում աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում հանքային պարատանյութերի մատուցման ՄՏԱ-ի կազմը,</li> <li>6) ճիշտ է նախապատարաստում ՄՏԱ-ը աշխատանքի համար,</li> <li>7) ճիշտ է կատարում աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով կստուգվեն սովորողների գիտելիքները: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ և կպահանջվի ներկայացնել հողի պարարտացման նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, օրգանական և հանքային պարարտանյութերի մատուցման ՄՏԱ-ի կազմը: Կազմել ՄՏԱ, նախապատարաստել աշխատանքի համար, կատարել պարատանյութերի մատուցման աշխատանքներ, պահպանելով անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի ժամանակ առաջադրված հարցերին և ամբողջովին ճիշտ է կատարել գործնական աշխատանքի ժամանակ առաջադրված պահանջները:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հողի պարարտացման նշանակության, ագրոտեխնիկական պահանջների, օրգանական և հանքային պարարտանյութերի մատուցման ձևերի վերաբերյալ և կարողություններ ՄՏԱ կազմելու,</p>

	կարգավորելու և պարարտացման տեխնոլոգիական գործընթացներ կատարելու համար: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն, դիտակտիվ նյութեր, տրակտորներ, պարարտանյութացան, մեքենաներ, գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել մշակաբույսերի քիմիական պաշտպանության տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում մշակաբույսերի քիմիական պաշտպանության նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում ՄՏԱ-ի կազմը, 3) ճիշտ է նախապատարաստում ՄՏԱ-ը աշխատանքի համար, 4) ճիշտ է կատարում աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները:
<b>Գնահատման միջոցը</b>	Հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով կստուգվեն սովորողների գիտելիքները: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ և կպահանջվի ներկայացնել մշակաբույսերի քիմիական պաշտպանության նշանակությունը, ագրոտեխնիկական պահանջները, կազմել ՄՏԱ, կարգավորել այն, կատարել քիմիական պաշտպանության աշխատանքները, պահպանելով անվտանգության կանոնները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեսթային առաջադրանքի ժամանակ առաջադրված հարցերին և ամբողջովին ճիշտ է կատարել գործնական աշխատանքի ժամանակ առաջադրված պահանջները:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ մշակաբույսերի քիմիական պաշտպանության նշանակության, ագրոտեխնիկական պահանջների, ՄՏԱ-ի կազման, դրա կարգավորման վերաբերյալ, զարգացնել կարողություններ ինքնուրույն կատարելու քիմիական պաշտպանության աշխատանքները: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն, դիտակտիվ նյութեր, տրակտորներ, քիմիական պաշտպանության մեքենաներ և սարքավորումներ, գործիքներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել մշակաբույսերի ցանքի և տնկման տեխնոլոգիաները, նախապատարաստել ՄՏԱ-ը աշխատանքի համար, կատարել աշխատանքը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում հացահատիկային մշակաբույսերի ցանքին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում ՄՏԱ-ի կազմը, 3) ճիշտ է նախապատարաստում ՄՏԱ-ը աշխատանքի համար, 4) ճիշտ է կատարում աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները:
<b>Գնահատման միջոցը</b>	Հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով կստուգվեն սովորողների գիտելիքները: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ և կպահանջվի ներկայացնել հացահատիկային մշակաբույսերի

	<p>ցանքին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջները, կազմել ՄՏԱ, կարգավորել և նախապատարաստել աշխատանքի համար, կատարել աշխատանքը, պահպանելով անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեստային առաջադրանքի ժամանակ առաջադրված հարցերին և ամբողջովին ճիշտ է կատարել գործնական աշխատանքի ժամանակ առաջադրված պահանջները:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ հացահատիկային մշակաբույսերի ցանքին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջների, ՄՏԱ-ի կազման, դրա կարգավորման վերաբերյալ, զարգացնել կարողություններ ինքնուրույն կատարելու աշխատանքը:</p> <p>Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն, դիտակտիվ նյութեր, տրակտորներ, տարբեր տեսակի ցանքի մեքենաներ և սարքավորումներ, գործիքներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 8 ժամ</p> <p>Գործնական աշխատանք 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Ճիշտ շարադրել մեքենաների պահպանման եղանակները և գործընթացները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է շարադրում տեխնիկայի պահպանման դրույթներն և հրահանգները,</li> <li>2) ճիշտ է շարադրում բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները,</li> <li>3) կարողանում է պահպանման ժամանակ ընտրել խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցներ և կատարել տեխնիկական սպասարկում,</li> <li>4) կարողանում է պահպանման ժամանակ ձեռնարկել հակահրդեհային միջոցառումներ և ընտրել համապատասխան միջոցներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով կստուգվեն սովորողների գիտելիքները: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ և կպահանջվի ճշտորեն շարադրել տեխնիկայի պահպանման դրույթներն և հրահանգները, բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները, պահպանման ժամանակ ընտրել խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցներ և կատարել տեխնիկական սպասարկում, ձեռնարկել հակահրդեհային միջոցառումներ և ընտրել համապատասխան միջոցներ:</p>
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ տեխնիկայի պահպանման դրույթների և հրահանգների, բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունների, պահպանման ժամանակ խնամքի և տեխնիկական սպասարկման միջոցներ ընտրելու վերաբերյալ, զարգացնել կարողություններ ինքնուրույն կատարելու տեխնիկական սպասարկում և ձեռնարկելու հակահրդեհային միջոցառումներ:</p> <p>Ուսուցման ընթացքում օգտագործվելու են չափորոշիչներ, ուսումնական գրականություն, դիտակտիվ նյութեր,</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	<p>Տեսական պարապմունք 8 ժամ</p> <p>Գործնական աշխատանք 10 ժամ</p>
<p><b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ &lt;&lt;ԳՅՈՒՂԱՏՆՏԵՄԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՂՐԱՆՔԻ ԲԵՌՆՈՒՄ-ԲԵՌՆԱԹԱՓՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ&gt;&gt;</b></p>	

<b>Մոդուլի դասիչը</b>	ԳՍՍՄ 3 – 12 – 013
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ կցասայլակով տրակտորը որպես տրանսպորտային միջոցի դերի, բեռների տեսակի, նրանց քանակի և չափերի, բեռնման և բեռնաթափման ձևերի և միջոցների, ինչպես նաև բեռների և արտադրանքի պահեստավորման վերաբերյալ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ Տեսական պարապմունք 10 ժամ Գործնական աշխատանք 8 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՍՍՄ 3-12-006 << Տրակտորի շասսի, կառավարման համակարգեր>> մոդուլը
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝ 1. կարողանա հստակ նկարագրել տրակտորային տրանսպորտային միջոցների տեսակները, դրանց կառուցվածքը և հնարավորությունները, 2. կարողանա հստակ նկարագրել բեռնման ու բեռնաթափման միջոցների տեսակները և կառուցվածքը, 3. Կարողանա ճիշտ բացատրել բեռների տեսակները, դրանց բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կարողանալ հստակ նկարագրել տրակտորային տրանսպորտային միջոցների տեսակները, դրանց կառուցվածքը և հնարավորությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) Ճիշտ է շարադրում տրակտորային տրանսպորտային միջոցների տեսակները, կառուցվածքը, տեխնիկական ցուցանիշները և նշանակությունը, 2) Ճիշտ է բացատրում տրանսպորտային միջոցների շահագործման ցուցանիշները:
<b>Գնահատման միջոցը</b>	Ուսանողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն ա) տրանսպորտային միջոցների տեսակների, բ) նրանց կառուցվածքի, գ) տեխնիկական ցուցանիշների և նշանակության վերաբերյալ առաջադրանքներ: Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ գործնական աշխատանքների միջոցով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է հստակ պատասխանի բոլոր հարցերին: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տրանսպորտային միջոցների տեսակների, նրանց կառուցվածքի, տեխնիկական ցուցանիշների և նշանակության վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	կարողանալ հստակ նկարագրել բեռնման ու բեռնաթափման միջոցների տեսակները և կառուցվածքը
	1) Ճիշտ է շարադրում բեռնման և բեռնաթափման միջոցների տեսակները, դրանց կառուցվածքը, տեխնիկական



<b>Կատարման չափանիշներ</b>	ցուցանիշները, 2) կարողանում է ընտրել կամ որոշել բեռնման և բեռնաթափման միջոցների շահագործման ցուցանիշները:
<b>Գնահատման միջոցը</b>	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Ուսանողների գիտելիքները ստուգելու նպատակով տրվում են ա) բեռնման և բեռնաթափման միջոցների տեսակների, բ) նրանց կառուցվածքի և գ) տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ առաջադրանքներ : Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և , գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ բեռնման և բեռնաթափման միջոցների տեսակների, նրանց կառուցվածքի, տեխնիկական ցուցանիշների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 2 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կարողանալ ճիշտ բացատրել բեռների տեսակները, դրանց բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) կարողանում է դասակարգել բեռների տեսակները, դրանց հատկությունները և որոշել հնարավոր գաբարիդային չափերի սահմանային արժեքները, 2) ճիշտ է ներկայացնում բեռնման և բեռնաթափման առանձնահատկությունները, 3)Ճիշտ է մեկնաբանում բեռնաթափման անվտանգության կանոնները:
<b>Գնահատման միջոցը</b>	Ուսանողների գիտելիքները ստուգելու նպատակով կտրվեն՝ ա) բեռների տեսակների, բ) նրանց հատկությունների, գ) հնարավոր գաբարիդային չափերի սահմանային արժեքների, դ) բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնների վերաբերյալ առաջադրանքներ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի բոլոր պահանջների կատարման վրա: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և , գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ բեռների տեսակների, նրանց հատկությունների, հնարավոր գաբարիդային չափերի սահմանային արժեքների, բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակ</b>	Տեսական պարապմունք 2 ժամ Գործնական աշխատանք 4 ժամ
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>	<b>&lt;&lt;ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ&gt;&gt;</b>
<b>Մոդուլի դասիչը</b>	ԳԱՏՄ-3-12-014
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է սովորողին տալ տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման վերաբերյալ գիտելիքներ և ձևավորել տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ Տեսական պարապմունք 18 ժամ

	Գործնական աշխատանք 36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է տիրապետի ԳԱՍ - 03-12-005 <<Տրակտորներ և շարժիչներ>>, ԳԱՍ - 03-12-006 <<Տրակտորի շասի, կառավարման մեխանիզմներ>>, ԳԱՍ - 03-12-007 <<Տրակտորի աշխատանքային սարքավորումներ>>, ԳԱՍ - 03-12-008 <<Տրակտորի էլեկտրասարքավորումներ>>, ԳԱՍ - 03-12-013 <<Գյուղատնտեսական բեռների և արտադրանքի բեռնում-բեռնաթափում, տեղափոխում և պահեստավորում >>, մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքներ</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝ 1. Իմանա տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման գործընթացները, 2. կատարի տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի կատարողականը գնահատվելու է կատարված աշխատանքի հիման վրա՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովումը:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման գործընթացները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման գործընթացները, 2) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկումների դերը և նշանակությունը 3) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկման տեսակները, դրանց կատարման ժամկետները և պարբերականությունը, 4) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկման առավել բարդ գործողությունները,
<b>Գնահատմա միջոցը</b>	Ուսանողին կտրվի ստուգողական առաջադրանք բաղկացած ոչ պակաս քան 6 հարցից, որոնք վերաբերվում են տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգումների գործընթացներին, տեխնիկական սպասարկումների և ընթացիկ նորոգումների դերին ու նշանակությանը, տեխնիկական սպասարկման տեսակներին, դրանց կատարման ժամկետներին և պարբերականությանը, տեխնիկական սպասարկման առավել բարդ գործողություններին: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել ստուգողական առաջադրանքի ժամանակ առաջադրված հարցերից ոչ պակաս քան 80%-ին:
<b>Մեթոդաբանություն և ռեսուրսներ</b>	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման գործընթացների, տեխնիկական սպասարկումների դերի և նշանակության, տեխնիկական սպասարկման տեսակների, դրանց կատարման ժամկետների և պարբերականության, տեխնիկական սպասարկման առավել բարդ գործողությունների վերաբերյալ ուսումնական համապատասխան գրականություն, ստենդներ, պլակատներ, սարքավորումների հիմնական խմբերի մոդելներ և նմուշներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք 8 ժամ Գործնական աշխատանք 16 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքները՝ ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ և միջսեզոնային տեխնիկական սպասարկումներ և ընթացիկ նորոգում, 2) ճիշտ է կիրառում սպասարկման տեխնիկական միջոցները:
Գնահատման միջոցը	Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանք, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների մոդելների և իրական մեքենաների վրա կատարել տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ, կիրառելով սպասարկման նորոգման տարբեր տեխնիկական միջոցներ: Գործնական աշխատանքը գնահատվում է գործնական պարապմունքների ժամանակ շարունակական հաջորդական քայլերի ճիշտ կատարման արդյունքում: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է կատարել ամբողջ գործնական աշխատանքը:
Մեթոդաբանություն և ռեսուրսներ	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների (ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ և միջսեզոնային տեխնիկական սպասարկումներ), սպասարկման և նորոգման տեխնիկական միջոցների վերաբերյալ ուսումնական գրականություն, ստենդներ, պլակատներ, սարքավորումների հիմնական խմբերի մոդելներ և նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակ	Տեսական պարապմունք 10 ժամ Գործնական աշխատանք 20 ժամ

### 3601 ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. <<ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ>> 18+18=36 ժամ
2. <<ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ, ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ>> 14+34=48 ժամ
3. <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ>> 18+18=36 ժամ
4. <<ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ>> 24+24=48 ժամ
5. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐ ԵՎ ՇԱՐԺԻՉՆԵՐԷ 36+36=72 ժամ
6. <<ՏՐԱԿՏՈՐԻ ՇԱՄԻ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ>> 36+18=54 ժամ
7. <<ՏՐԱԿՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ>> 12+24=36 ժամ
8. <<ՏՐԱԿՏՈՐԻ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ>> 6+12=18 ժամ
9. «ՏՐԱԿՏՈՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՄԷ 8+28=36 ժամ
10. <<ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ>> 18+18=36 ժամ
11. «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԷ 36+36=72 ժամ

12. <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ>>  $48+60=108$  ժամ
13. <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԲԵՌՆՈՒՄ-ԲԵՌՆԱԹԱՓՈՒՄ,ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ>>  $10+8=18$  ժամ
14. <<ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ>>  $18+36=54$  ժամ